

(77-78) Երկրի բնակչության թիվը 90 000 է, բնական աճի գործակիցը՝ 15 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 1800 մարդ, արտագաղթը՝ 700 մարդ.

77 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

78 Որոշել բնակչության թիվը մեկ տարի անց:

(79-80) Գետի լայնությունը 5 մ է, միջին խորությունը՝ 80 սմ, ջրի արագությունը՝ 2 մ/վ.

79 Որոշել գետի ծախսը:

80 Որոշել գետի հոսքը 3 ժամում:

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2013

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՄԱՏ 6

Խմբի համարը   
Նստարանի համարը

### Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:


Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

1 Նկարում Ա տառով նշված է.



- 1) լավային հոսքը
- 2) հրաբխի խառնարանը
- 3) մագմային օջախը
- 4) հրաբխի մղանցքը

2 1 : 80 000 մասշտաբի քարտեզում երկու կետերի միջև հեռավորությունը 6 սմ է: Դրանց միջև իրական հեռավորությունը կլինի.

- 1) 4800 կմ
- 2) 4,8 կմ
- 3) 48 կմ
- 4) 480 կմ

3 Աշխարհագրական լայնությունները լինում են.


- 1) 0°–360°
- 2) 0°–90°
- 3) 0°–180°
- 4) 0°–270°

4 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մարտի 21–ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հասարակածի վրա:
- 2) Հունիսի 22–ի կեսօրին Արեգակը լինում է զենիթում հվ. լ. 23° 30՛ գուգահեռականի վրա:
- 3) Դեկտեմբերի 22–ի կեսօրին Արեգակը լինում է զենիթում հս. լ. 23° 30՛ գուգահեռականի վրա:
- 4) Սեպտեմբերի 23–ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հյուսիսային բևեռային շրջագծի վրա:

75 Քարտեզում ՀՀ հողային ո՞ր տիպն է նշված Ա տառով.


- 1) լեռնային սևահողեր
- 2) կուլտուր–տոռգելի հողեր
- 3) անապատակիսաանապատային
- 4) աղուտ–ալկալի հողեր (աղուտներ)



76 Մարզի ապահովվածությունը ածխի պաշարներով կազմում է 60 տ/մարդ, ածխի պաշարները՝ 2 400 000 տ: Որքան կլինի մարզի բնակչության թիվը:

Քարտեզում ո՞ր ռասայի տարածման շրջաններն են պատկերված Գ տառով.

- 1) ավստրալոիդ
- 2) նեգրոիդ
- 3) մոնղոլոիդ
- 4) եվրոպեոիդ



5

Արտածին ուժերի ազդեցությամբ Երկրի մակերևութային ապարների քայքայման, մանրացման և վերափոխման երևույթը կոչվում է.

- 1) հողմահարում
- 2) տեղատարում
- 3) լեռնագոյացում
- 4) կուտակում

6

Բացարձակ խոնավության հարաբերությունը խոնավության այն քանակին, որն անհրաժեշտ է տվյալ ջերմաստիճանի օդը հագեցնելու համար, կոչվում է.

- 1) նվազագույն խոնավություն
- 2) առավելագույն խոնավություն
- 3) հարաբերական խոնավություն
- 4) միջին խոնավություն

7

Երկու ջրային ավազաններն իրար միացնող ջրային նեղ տարածությունը կոչվում է.


- 1) փողրակ
- 2) ծովածոց
- 3) նեղուց
- 4) ծով

8

Մեծ Արարատի բացարձակ բարձրությունը 5165 մ է, Արարատյան դաշտինը՝ 850 մ: Մեծ Արարատի հարաբերական բարձրությունը կլինի.

- 1) 6015 մ
- 2) 4315 մ
- 3) 5823 մ
- 4) 4547 մ


9 Ո՞ր քամիներն են պատկերված.



- 1) լեռնահովտային քամիներ
- 2) բրիզներ
- 3) պասսատներ
- 4) մուսսոներ

10 Նկարում ո՞ր թվով է նշված օդի ջերմաստիճանի տարեկան ընթացքի կորը հասարակածային լայնություններում.

- 1) 4
- 2) 1
- 3) 2
- 4) 3



11 «Օվկիանոս — ծով» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Հյուսիսային սառուցյալ — Բերինգի
- 2) Խաղաղ — Բարենցի
- 3) Ատլանտյան — Կարայի
- 4) Հնդկական — Կարմիր

70 Արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումների հետևանքով առավել աղտոտված բնակավայրեր են.

- 1) Վեդին և Մախտակը
- 2) Արարատը և Ագարակը
- 3) Ջերմուկը և Դիլիջանը
- 4) Չարենցավանը և Արմավիրը

71 Վառելիքաէներգետիկ ռեսուրսներով աղքատ են.

- 1) Իրանը և Ղազախստանը
- 2) Ճապոնիան և Իտալիան
- 3) ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան
- 4) Ռուսաստանը և Չինաստանը

72 Հակաերոզիոն միջոցառում չէ.

- 1) գենոֆոնդի պահպանումը
- 2) հողաբարելավումը
- 3) հողերի վերակուլտիվացիան
- 4) առաջավոր ագրոտեխնիկան

73 Կենսաբանական աղտոտիչ է (են).

- 1) էլեկտրամագնիսական դաշտը
- 2) վիրբացիան
- 3) բակտերիաները
- 4) ջերմությունը

65 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) ՀՀ անապատակիսաանապատային լանդշաֆտներն առաջացել են Արարատյան գոգավորությունում և Վայքում անտառների անխնա ոչնչացման հետևանքով:
- 2) ՀՀ անտառների վերին և մերձալպյան գոտու մարգագետինների ստորին սահմանների միջև տարածվում են չորասեր նոսր անտառները:
- 3) ՀՀ մերձալպյան և ալպյան լանդշաֆտներում բարձր է Արեգակի ճառագայթային էներգիայի ինտենսիվությունը (ուժգնությունը):
- 4) ՀՀ կուլտուր-ռոտգելի հողերը տարածվում են սևահողային տափաստանների ենթագոտում:

66 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) ՀՀ-ում գրանցված ամենացածր ջերմաստիճանը  $-42,6^{\circ}\text{C}$  է:
- 2) Տարվա ընթացքում ամպամած օրերի թիվը ամենաքիչը Մարտունիում է:
- 3) ՀՀ-ում ամենաբարձր ջերմաստիճանը ( $42^{\circ}$ ) գրանցվել է Արարատյան դաշտում (Երասխ):
- 4) ՀՀ-ում ամենաշատ տեղումներ թափվում են Արագած և Կապուտջուղ լեռնագագաթներին:

67 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) ՀՀ մշտական բնակության վերին սահմանը 2400 մ է:
- 2) ՀՀ-ն, իր հարևանների համեմատ, ամենացածր ուրբանիզացման մակարդակ ունեցող երկիրն է:
- 3) ՀՀ ազգային փոքրամասնություններից են արաբները և ադրբեջանցիները:
- 4) ՀՀ բնակչության ամենամեծ խտության ցուցանիշով առանձնանում է Սևանի ավազանը:

68 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Այլումինի արդյունաբերությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):
- 2) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:
- 3) Վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի բնական գազը:
- 4) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:

69 **Ի՞նչն է ընդհանուր Գյումրի և Հրազդան քաղաքների համար.**

- 1) գործում են ցեմենտի արտադրության խոշոր ձեռնարկություններ
- 2) երկաթուղային հանգույցներ են
- 3) արդյունաբերության առաջատար ճյուղը պղնձաձուլությունն է
- 4) գործում են հզոր ջերմաէլեկտրակայաններ

12 **Ո՞ր բնական գոնային է բնորոշ ավելցուկային խոնավությունը.**

- 1) բարեխառն գոտու տափաստանների
- 2) սավաննաների և նոսր անտառների
- 3) անապատների և կիսաանապատների
- 4) տունդրայի

13 **Բնութագրումով որոշել լիճը.**

*Ամուղարյա և Միրդարյա գետերը թափվում են մնացորդային ծագման այդ լճի մեջ: Այդ գետերի ջրերը ռոտգման նպատակով օգտագործելու պատճառով լիճը ծանծաղել է: Ո՞ր լիճն է.*

- 1) Իսիկ Կուլ
- 2) Արալյան
- 3) Բալխաշ
- 4) Կասպից

14 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Ավստրալիայի ամենախոշոր հոսուն լիճը Էյրն է:
- 2) Ավստրալիայի ներքին ընդարձակ շրջանները (տարածքի 60 %-ը) հոսք չունեն դեպի օվկիանոս:
- 3) Ներքին շրջանների գետերը մշտական հոսք չունեն, և այստեղ շատ են չոր գետահուները՝ քրիկները:
- 4) Կենտրոնաավստրալական դաշտավայրի տարածքում է ստորերկրյա ջրերի Մեծ արտեզյան ավազանը:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Քարոլորտի սալերի իրար մոտենալու և սեղմվելու հետևանքով առաջանում են ընդարձակ հարթավայրեր:
- 2) Մայրցամաքային և օվկիանոսային երկրակեղևների կառուցվածքը նույնն է:
- 3) Երկրակեղևի ամենաակտիվ, երկրաշարժավտանգ գոտիները գեոսինկլինային շրջաններն են:
- 4) Քարոլորտի սալերի և մայրցամաքների սահմանները ճշգրտորեն համընկնում են:

16 **«Ծով — կղզի» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Օխոտի ծով — Սախալին կղզի
- 2) Արաբական ծով — Շրի Լանկա կղզի
- 3) Կարիբյան ծով — Նյուֆաունդլենդ կղզի
- 4) Ադրիատիկ ծով — Կորսիկա կղզի


17 «Հարթավայր — աշխարհամաս» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Արաբական սարահարթ — Եվրոպա
- 2) Մեծ ավազան սարահարթ — Ավստրալիա և Օվկիանիա
- 3) Թուրանի դաշտավայր — Ասիա
- 4) Մերձատլանտյան դաշտավայր — Աֆրիկա

18 Միջերկածովային կլիման բնորոշ է.

- 1) Աֆրիկայի ծայր հյուսիսային մասերին
- 2) Հնդստան թերակղզու ներքին շրջաններին
- 3) Հարավային Ամերիկայի բարեխառն գոտու արևելյան մասերին
- 4) Ֆլորիդա թերակղզուն

19 Ո՞ր անապատն է քարտեզում նշված Գ տառով.



- 1) Կարակում
- 2) Գոբի
- 3) Թար
- 4) Տակլա-Մական

20 Ո՞ր պետությունն է քարտեզում նշված Ե տառով.

- 1) Տաջիկստան
- 2) Թուրքմենստան
- 3) Ուզբեկստան
- 4) Ղազախստան

61 Մեքենաներ և սարքավորումներ արտահանող առաջատար երկիր է.

- 1) Ավստրալիան
- 2) Ռուսաստանը
- 3) Կանադան
- 4) Գերմանիան

62 Ճապոնիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հացահատիկային գլխավոր մշակաբույսը ցորենն է:
- 2) Երկրի արդյունաբերությունը գերազանցապես աշխատում է սեփական հումքային և վառելիքային ռեսուրսների հաշվին:
- 3) Ալյումինի, պղնձի, ցինկի ձուլարանները հիմնականում տեղաբաշխված են մետաղների խտանյութի ներկրման նավահանգիստներում:
- 4) Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում մեծ է անասնապահության բաժինը:

63 Բնութագրումով որոշել պետությունը.

*Այս պետությունն անմիջական էլք չունի դեպի Համաշխարհային օվկիանոս: Հարուստ է նավթի ու բնական գազի պաշարներով: Բնակչությունը հիմնականում պատկանում է ալթայյան լեզվաընտանիքի թյուրքական լեզվախմբին և դավանում մահմեդականության շիա ուղղությունը: Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերն են բամբակենին, թեյը: Ո՞րն է այդ պետությունը.*

- 1) Իրանը
- 2) Վրաստանը
- 3) Ադրբեջանը
- 4) Թուրքիան

64 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տիգրիսը պատկանում է Կասպից ծովի ավազանին:
- 2) Հայկական լեռնաշխարհը պատկանում է միայն Սև և Միջերկրական ծովերի ավազաններին:
- 3) Արաքսն ունի սառցադաշտային սնում:
- 4) Հայկական լեռնաշխարհի գետերն ունեն մեծ անկում:

56 Հյուսիսից հարավ շարժվելիս բարեխառն գոտու անտառների զոնան փոխվում է անտառատափաստանների, որովհետև.

- 1) հողերը ճահճանում են
- 2) ռելիեֆն աստիճանաբար դառնում է ավելի բարձրադիր
- 3) ձմեռները դառնում են խստաշունչ
- 4) փոխվում է ջերմության և խոնավության քանակը

57 Աֆրիկայի մերձարևադարձային (միջերկրածովային) մշտականաչ կոշտատերև անտառների և թփուտների բնական զոնայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տարածվում է հասարակածի երկու կողմերում՝ ընդգրկելով Գվինեական ծովածոցի մերձափնյա շրջանները և Կոնգո գետի միջին հոսանքի ավազանը:
- 2) Բնորոշ են փշոտ բույսերը՝ ուղտափուշը, օշինդրը, աղաբույսը, փշոտ թփերը, անապատային ակացիան, իսկ հարավի անապատներին ու կիսաանապատներին՝ ծիծեռնախոտը, բարձիկանման փշոտ բույսերը և այլն:
- 3) Տարեկան տեղումների քանակը 600–800 մմ է, որոնց մեծ մասը թափվում է ձմռանը, իսկ հողերը դարչնագույն են կամ դեղնակարմրավուն:
- 4) Համատարած խոտածածկույթի հետ աճում են միայնակ ծառեր, որոնցից նշանավոր են բաոբաբը, միմոզան, հովհարաձև ակացիան, չորադիմացկուն արմավե նին և այլն:

58 Ո՞ր շարքի բոլոր աշխարհագրական օբյեկտներն են Եվրասիայում.

- 1) Չինական մեծ հարթավայր, Չագրոսի լեռներ, Վենեռն լիճ
- 2) Դեկանի սարահարթ, Էրեբոս լեռ, Լադոգա լիճ
- 3) Միջինդանուբյան դաշտավայր, Օրիսաբա հրաբուխ, Բալխաշ լիճ
- 4) Մեծ Ավազան սարահարթ, Վերխոյանսկի լեռներ, Վերին լիճ

59 Դեպի ծով ելք չունեն.

- 1) Սուդանը և Անգոլան
- 2) Վիետնամը և Օմանը
- 3) Տաջիկստանը և Մոնղոլիան
- 4) Պերուն և Բոլիվիան

60 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բնակչության վերարտադրության ամենաբարձր տեմպերը նկատվում են եվրոպական երկրներում:
- 2) Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներին բնորոշ է ցածր ծնելիությունը, ցածր մահացությունը և ցածր բնական աճը:
- 3) «Ժողովրդագրական պայթյունը» բնակչության թվի կտրուկ աճն է և բնորոշ է զարգացող երկրներին:
- 4) Բնակչության վերարտադրության ցուցանիշների վրա առավել մեծ ազդեցություն են թողնում սոցիալ-տնտեսական գործոնները:

21 Քաղաքային և գյուղական բնակավայրերի խոշոր կուտակումը մեծ քաղաքի կամ քաղաքների շուրջը, որոնք միմյանց հետ կապված են աշխատանքային, մշակութային, կենցաղային, արտադրական և այլ կապերով, կոչվում է.

- 1) ասիմիլյացիա
- 2) միգրացիա
- 3) ագլոմերացիա
- 4) ուրբանիզացիա

22 Բնակչության վայրի ժամանակավոր կամ մշտական փոփոխության հետ կապված բնակչության տեղաշարժը կոչվում է.

- 1) բնակչության բնական շարժ
- 2) տարաբնակեցում
- 3) բնակչության միգրացիա
- 4) բնակչության տեղաբաշխում

23 Բնութագրումով որոշել պետությունը.

*Այս պետությունը հյուսիսից սահմանափակված է Հիմալայան և Կարակորում լեռնաշղթաներով: Բնակչությունը բազմազգ է և բազմակրոն: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով, թեյի մշակությամբ աշխարհի առաջատարներից է: Ո՞րն է այդ պետությունը.*

- 1) Ինդոնեզիան
- 2) Հնդկաստանը
- 3) Չինաստանը
- 4) Պակիստանը

24 Որոշել երկրի բնակչության թիվը, եթե այդ երկրի գյուղատնտեսական հողահանդակների ընդհանուր մակերեսը 15 մլն հա է, իսկ մեկ բնակչին բաժին է ընկնում 3 հա գյուղատնտեսական հողահանդակ.

- 1) 2 մլն
- 2) 18 մլն
- 3) 5 մլն
- 4) 12 մլն

25 «Ժողովուրդ — լեզվախումբ» գույգերից ո՞րն է սխալ.

- 1) քրդեր — թուրքական
- 2) ուզբեկներ — թուրքական
- 3) պարսիկներ — իրանական
- 4) լեհեր — սլավոնական



26

«Պետություն — կառավարման ձև» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) Շվեդիա — միապետություն
- 2) Իրան — հանրապետություն
- 3) Նիդերլանդներ — հանրապետություն
- 4) Օման — միապետություն

27

«Արդյունաբերության ճյուղ — տեղաբաշխման գործոն» գույգերից ընտրել *ճիշտը*.

- 1) թեթև արդյունաբերություն — աշխատանքային ռեսուրսների գործոն
- 2) ալյումինաձուլություն — սպառման գործոն
- 3) ռոբոտաշինություն — հումքային գործոն
- 4) գյուղատնտեսական մեքենաշինություն — վառելիքաէներգետիկ գործոն

28

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ *ո՞ր* պնդումն է *սխալ*.

- 1) Ըստ պետական կարգի՝ բացարձակ միապետություն է:
- 2) Բարձր է բնակչության խտությունը:
- 3) Բնակչության կազմում մեծ է աշխատունակ բնակչության բաժինը:
- 4) Բնակչության մեծ մասը դավանում է քրիստոնեության կաթոլիկ և բողոքական ուղղությունները:

29

Նոսր բնակեցված երկրներ են.

- 1) Հայաստանը և Բելգիան
- 2) Ավստրալիան և Կանադան
- 3) Գերմանիան և Ֆրանսիան
- 4) Ինդոնեզիան և Ճապոնիան

30

Թերակղզային երկրներ են.

- 1) Թուրքիան և Իրանը
- 2) Նորվեգիան և Կիպրոսը
- 3) Դանիան և Իռլանդիան
- 4) Իտալիան և Իսպանիան

31

«Մշակաբույս — առաջատար երկիր» գույգերից ընտրել *ճիշտը*.

- 1) ցորեն — Նորվեգիա
- 2) բամբակենի — Լեհաստան
- 3) սուրճ — Կոլումբիա
- 4) խաղող — Բելգիա

## Բ մակարդակ

51

Ո՞ր պնդումն է *ճիշտ*.

- 1) Բնեռային շառավիղը մեծ է հասարակածային շառավիղից:
- 2) Գլոբուսի վրա բոլոր միջօրեականներն իրար հավասար են:
- 3) Հս. լ. 66° 30՛ գուգահեռականի վրա գիշերահավասարի երևույթը տարվա մեջ նկատվում է մեկ անգամ՝ դեկտեմբերի 22-ին:
- 4) Տվյալ պահին նույն միջօրեականի վրա գտնվող վայրերում, կախված դրանց աշխարհագրական լայնությունից, գրանցվում են տարբեր տեղական ժամանակներ:

52

Ժամը քանի՞ սը կլինի 7-րդ ժամային գոտում, եթե 4-րդ ժամային գոտում ժամը 15<sup>00</sup>-ն է.

- 1) 23<sup>00</sup>
- 2) 11<sup>00</sup>
- 3) 15<sup>00</sup>
- 4) 18<sup>00</sup>

53

Ո՞ր պնդումն է *ճիշտ*.

- 1) Կլիմայի ցամաքայնության մեծացմանը զուգընթաց ամռան միջին ջերմաստիճանը նվազում է:
- 2) Պասսատները տեղումներ են առաջացնում մայրցամաքների արևմտյան ափերին:
- 3) Մուսսոնային շրջաններում տեղումների մեծ մասը թափվում է ամռանը:
- 4) Տոռնադոն և թայֆունը արևադարձային հզոր անտիցիկլոններ են:

54

Ընտրել բնության բաղադրիչների միակ *ճիշտ* գուգորդումը.

- 1) Ավստրալիա — Մուրեյ — Խաղաղ օվկիանոս
- 2) Հյուսիսային Ամերիկա — Յուկոն — Հյուսիսային սառուցյալ օվկիանոս
- 3) Եվրասիա — Դանուբ — Խաղաղ օվկիանոս
- 4) Աֆրիկա — Օրանժ — Ատլանտյան օվկիանոս

55


Ո՞ր շարքի բոլոր կղզիները նույն օվկիանոսում *չեն*.

- 1) Թայվան, Սախալին, Ֆիլիպինյան
- 2) Շախբերգեն, Նոր Երկիր, Հյուսիսային երկիր
- 3) Հոնոլու, Կալիմանտան, Շրի Լանկա
- 4) Իսլանդիա, Իռլանդիա, Մեծ Բրիտանիա



49 Ո՞ր լեռներն են քարտեզում նշված **Բ** տառով.

- 1) Շիրակի
- 2) Վիրահայոց
- 3) Բազումի
- 4) Եղնախաղի



50 Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված **Է** տառով.

- 1) Իջևան
- 2) Ճամբարակ
- 3) Բերդ
- 4) Դիլիջան

32 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Կակաոյի համաշխարհային բերքի մեծ մասն արտադրվում է Հարավային Եվրոպայի երկրներում:
- 2) Մանր եղջերավոր անասնապահությունը հիմնականում տեղաբաշխված է չորային կլիմա ունեցող և լեռնային շրջաններում:
- 3) Խոզերի գլխաքանակով աշխարհի առաջատար երկիրը Ռուսաստանն է:
- 4) Անգորական այծերի գլխաքանակով աշխարհի առաջատար երկիրը Կանադան է:

33 Կյանքի առավել ցածր միջին տևողություն ունեն.

- 1) Ավստրալիան և Կանադան
- 2) Ավստրիան և Բելգիան
- 3) Նիդերլանդները և Դանիան
- 4) Մոզամբիկը և Զամբիան

34 Էներգետիկական հաշվեկշռում ջրէկների առավել մեծ բաժին ունեցող երկրներ են.

- 1) Գերմանիան և Ճապոնիան
- 2) Ուկրաինան և ԱՄՆ-ը
- 3) Նորվեգիան և Կանադան
- 4) Չինաստանը և Ֆրանսիան

35 Արևելյան Եփրատի վտակ է.

- 1) Խրամը
- 2) Ճորոխը
- 3) Բագրևանդը
- 4) Մակուն

36 «Գետ — դաշտ» գուգերից ընտրել *սխալը*.

- 1) Արաքս — Նախիջևանի
- 2) Արևմտյան Եփրատ — Բասենի
- 3) Արևելյան Եփրատ — Մշո
- 4) Արևմտյան Եփրատ — Կարնո

37 Ո՞ր հարթավայրն է ավելի բարձրադիր.

- 1) Շիրակի դաշտը
- 2) Աշոցքի սարահարթը
- 3) Ապարանի սարահարթը
- 4) Արարատյան դաշտը

- 38 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**
- 1) Ալայյան և մերձալայյան բուսականությունը տարածվում է 1500–2200 մ բարձրությունների միջև:
  - 2) Անտառները զբաղեցնում են ՀՀ տարածքի մոտ 10%-ը և զբաղեցնում են ՀՀ հյուսիսարևելյան և հարավարևելյան շրջանները:
  - 3) Լեռնաչորասեր բուսականությունը տարածվում է տափաստանային և անտառային բուսականության միջև:
  - 4) Անապատային–կիսաանապատային բուսականությունը տարածվում է 1200–1500մ բարձրությունների միջև:

- 39 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**
- 1) ՀՀ–ում ռուսները հիմնականում բնակվում են Արմավիրի մարզի քաղաքային բնակավայրերում:
  - 2) ՀՀ–ում թվաքանակով երկրորդ ազգը ռուսներն են:
  - 3) ՀՀ–ում եզդիները հիմնականում բնակվում են Արագածոտնի մարզի քաղաքային բնակավայրերում:
  - 4) ՀՀ–ն ազգային կազմով աշխարհի առավել միատարր պետություններից է:

40 **ՀՀ արդյունաբերության առաջատար ճյուղ չէ.**

- 1) շինանյութերի արդյունաբերությունը
- 2) գունավոր մետաղաձուլությունը
- 3) էլեկտրաէներգետիկան
- 4) ավտոմոբիլաշինությունը

41 **Ո՞ր բնական լանդշաֆտն է տիրապետում Արմավիրի մարզում.**

- 1) անտառային
- 2) տափաստանային
- 3) չոր տափաստանային
- 4) կիսաանապատային

42 **Արագածոտնի մարզի սննդի արդյունաբերության առաջատար արտադրություններն են.**

- 1) հանքային ջրերի և պահածոների
- 2) գինու և կաթնամթերքի
- 3) ծխախոտի և շաքարի
- 4) ձեթի և մսամթերքի

43 **Ո՞ր բարձրությունն է պտղաբուծության տարածման վերին սահմանը.**

- 1) 2500 մ
- 2) 1000 մ
- 3) 1400 մ
- 4) 2100 մ

44 **Ո՞ր երկիրն է համեմատաբար աղքատ անտառային ռեսուրսներով.**

- 1) Ռուսաստանը
- 2) Ինդոնեզիան
- 3) Իսպանիան
- 4) Բրազիլիան

45 **Հողերի աղակալման պատճառ է.**

- 1) սելավային հոսքերը
- 2) գրունտային ջրերի մակարդակի բարձրացումը
- 3) խորքային վարը
- 4) անտառապատ տարածքների կրճատումը

46 **Իրենց բաղադրության մեջ պարունակվող տարբեր նյութերի միջոցով մարդու օրգանիզմի վրա ցավազրկող, հանգստացնող, հակաբորբոքային ազդեցություն են ունենում.**

- 1) տեխնիկական բույսերը
- 2) դեկորատիվ բույսերը
- 3) դեղաբույսերը
- 4) կերաբույսերը

47 **Ո՞րն է մթնոլորտի մաքրության պահպանման միջոցառումներից.**

- 1) կանաչ տարածքների ընդարձակումը
- 2) քիմիական ձեռնարկությունների թվի ավելացումը
- 3) ցեմենտի արտադրության ավելացումը
- 4) ջերմային էլեկտրակայանների թվի ավելացումը

48 **Այն հիմնախնդիրները, որոնք ընդգրկում են ամբողջ երկրագունդը և մարդկությունը, սպառնում են նրանց ներկային ու ապագային՝ պահանջելով բոլոր ժողովուրդների ու երկրների գործողությունների միասնությունը, կոչվում են.**

- 1) համամոլորակային
- 2) տարածաշրջանային
- 3) տեղական
- 4) բնական